

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՈԶԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ

**«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ»**

**Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»
մասնագիտությամբ**

Տնտեսագիտության թեկնածուի

Գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

Երևան - 2020թ.

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Լիանա Հայկազի Գրիգորյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Արմեն Աշմատի Հակոբյան

տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ

Արման Սասունի Դաղունց

**Առաջատար
կազմակերպություն՝**

Հայ-Ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. փետրվարի 20-ին ժամը 14 00 -ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020թ. հունվարի 10-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար

տնտեսագիտության դոկտոր
Լ.Հ.Գրիգորյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Գյուղատնտեսության ապահովագրությունը համարվում է գյուղատնտեսական ռիսկերի զսպման ամենաարդյունավետ և կիրառելի գործիքը: Դրա միջոցով ոչ միայն տրամադրվում է ֆինանսական պաշտպանության ծածկույթ, այլև իրականացվում է կանխարգելիչ միջոցառումների մի ամբողջ փաթեթ՝ հնարավոր գյուղատնտեսական ռիսկերի զսպման և ռիսկերի նվազեցման համար: Հանդիսանալով ՀՀ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը՝ ՀՀ-ում երկար տարիներ փորձ է արվել ներդնել գյուղատնտեսության ապահովագրության համապարփակ կամ պիլոտային ծրագրեր:

2017 թվականից սկսած KfW բանկի ֆինանսավորմամբ և պատվերով շվեյցարական MF Strategy Sarl ընկերությունը մշակել է ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման ծրագիր: Անցկացվել են մի շարք հարցազրույցներ գյուղացիների և գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչների հետ, հետազոտվել են ՀՀ-ում առկա վիճակագրական տվյալներ, կլիմայական պայմաններ, որի արդյունքում նախագծվել է պատրաստի ծրագիր: Ապահովագրության լավագույն մեխանիզմ է ընտրվել «արտադրական ծախսերի» հիման վրա ապահովագրությունը:

Հիմք ընդունելով ՀՀ-ում գյուղատնտեսության կարևորությունը, դրա սոցիալական նշանակությունը, պարենային անվտանգության հիմնախնդիրները՝ ՀՀ-ում գյուղատնտեսական ճիշտ և համապարփակ ապահովագրության համակարգի ներդրումը և դրա կատարելագործումը ունի ռազմավարական նշանակություն, և օր առաջ անհրաժեշտություն կա իրականացնել այդպիսի ապահովագրությունը: Եվ իհարկե անհրաժեշտություն է առաջանում պատշաճ խորությամբ կատարել հետազոտություն՝ ուսումնասիրելով, թե արդյոք այսօր առաջարկվող մոդելը բավարարում է գյուղացու և ապահովագրական ընկերությունների պահանջները, գտնել մոդելի թերությունները, և առաջարկել ավելի կատարելագործված մեխանիզմ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է բացահայտել ներկայումս ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսական պիլոտային ծրագրի թերությունները և խնդիրները, գտնել համապատասխան կատարելագործման և բարելավման ուղիներ և մեթոդներ՝ առաջարկելով ավելի ճկուն մոդել, քան «արտադրական ծախսերի» հիման վրա իրականացվող մոդելն է: Նշված նպատակին հասնելու համար ձևավորվել են ուսումնասիրության հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար արդեն իսկ կատարված աշխատանքները, վերլուծությունները և կիրառելիությունը,
2. Բացահայտել մինչ այժմ ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության բացակայության դրդապատճառները,
3. Բացահայտել ներկայումս ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի կիրառելիությունը, դրական և բացասական կողմերը, հիմնախնդիրները, գտնել այսօրվա ծրագրերից դուրս մնացած գյուղացիական տնտեսությունները, դրանց կարևորությունը, ինչպես նաև այդ տնտեսությունների համար մշակել համապարփակ ապահովագրության պրոդուկտներ,
4. Գտնել գյուղատնտեսության ապահովագրության բաշխման, հաշվառման և այլ կազմակերպական գործընթացների արդյունավետ կիրառման մեխանիզմներ:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Հետազոտության օբյեկտն է ապահովագրական ընկերությունների, գյուղացիների, միջնորդների և կարգավորող մարմնի՝ ՀՀ Կենտրոնական Բանկի, ի դեմս Գյուղատնտեսական Ապահովագրության Ազգային Գործակալության միջև փոխհարաբերությունները և դրանցից բխող հետևանքները: Որպես հետազոտության առարկա են ընտրվել գյուղատնտեսական ապահովագրության ոլորտը, իրականացման ձևերը ու կազմակերպման առանձնահատկությունները ՀՀ-ում:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Վերլուծության իրականացման ժամանակ օգտագործվել են գյուղատնտեսության ապահովագրության համակարգերի ներդրման համար հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատություններ, գիտական հրապարակումներ, աշխատանքային փաստաթղթեր, միկրո և մակրոտնտեսական մեկնաբանումներ, ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսության ապահովագրության համակարգի նորմատիվ ակտեր, վերլուծական նյութեր: Հետազոտության տեղեկատվական հիմք են հանդիսացել նաև արտասահմանյան որոշ երկրներում գյուղատնտեսության ապահովագրությունը կարգավորող իրավական ակտեր, ինչպես նաև ՀՀ-ում գյուղատնտեսական ցուցանիշների առավել մանրամասն վիճակագրություն՝ համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական Ծառայության պաշտոնական տվյալների:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը և հիմնական արդյունքները, որոնք պայմանավորված են աշխատանքում ներկայացված հիմնախնդիրների դիտարկմամբ, կայանում են հետևյալում.

1. Գնահատելով «Արտադրական ծախսերի» գյուղատնտեսության ապահովագրության մոդելը՝ առաջարկվել է ՀՀ-ում ներդնել գյուղատնտեսության ապահովագրության՝ «**Բերքի ապահովագրության**» վրա հիմնված մոդելը փոլային եղանակով, ի լրումն «Արտադրական ծախսերի» մոդելի,
2. Առաջարկվում է ներդնել Զերմոցային տնտեսությունների ապահովագրության մեխանիզմ՝ գույքի ապահովագրության շրջանակներում «Բիզնեսի Ընդհատում» ռիսկի ապահովագրության ծածկույթներով,
3. Առաջարկվում է գյուղատնտեսության ապահովագրության ներդրման հետ զուգահեռ ՀՀ-ում ստեղծել և խթանել գյուղատնտեսական կոոպերատիվներ՝ Բաժնետիրական Ընկերության իրավական կարգավիճակով և կոոպերատիվի մասնակիցների բաժնեմասերի առկայությամբ,
4. Առաջարկվում է Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության ներկայիս «Արտադրական ծախսերի» հիման վրա գործող մոդելի արդյունավետության բարձրացման նպատակով կատարել կոնկրետ գործավարման և այլ ծախսերի (սակագնի բեռնվածության) օպտիմալացում, ինչպես ապահովագրության մեջ, այնպես էլ վերաապահովագրության փոխանցվող հատվածի տեսակարար կշռի մեջ:
5. Առաջարկվում է ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության բաշխումը իրականացնել նոր ուղղություններով, այդ թվում՝ օգտագործել Անօդաչու թռչող սարքերի հնարավորությունները ռիսկերի և վնասների գնահատման համար:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը: Ատենախոսությունը ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն է: Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները հնարավորություն կտան ներդնել գյուղատնտեսական ապահովագրության ավելի կատարելագործված մոդել, կրճատել գործող մոդելի ծախսերը և բարձրացնել դրա արդյունավետությունը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնարկությունները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՊՏՀ «Բանկային գործ և ապահովագրություն» ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 (վեց) գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է 3 գլուխներից, ներածությունից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից՝ ընդամենը 150 էջ ծավալով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության **Առաջին**¹ «Գյուղատնտեսության ապահովագրության համակարգը և դերը» գլխում ներկայացվել են ՀՀ-ում գյուղատնտեսության դերը և նշանակությունը, ծավալային առումով դրա ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, հիմնական ռիսկերը, ապահովագրության տարբեր մոտեցումները, ինչպես նաև գյուղատնտեսական ապահովագրության միջազգային փորձը:

Գյուղատնտեսությունը համարվում է ՀՀ տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: 2018թ.-ի ՀՀ ՀՆԱ-ն կազմել է 6,002 մլն ՀՀ դրամ, որից 926 մլն ՀՀ դրամը, կամ ՀՆԱ 15.4%-ը կազմել է գյուղատնտեսությունը¹: Գյուղատնտեսությունը տարեցտարի կորցնում է իր դիրքը ՀՆԱ մեջ, և տեղը զիջում է ծառայությունների ոլորտին: Ծառայությունների ոլորտի աճին է մեծապես նպաստում ՀՀ-ում ՏՏ ոլորտի անընդհատ զարգացումը:

ՀՀ ընդհանուր հողային մակերեսը կազմում է 2,974 հազար հա, որից 2,043 հազար հա-ն կամ 68.7%-ը՝ գյուղատնտեսական նշանակության:

Բուսաբուծությունը գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ 2017թ. տվյալներով կազմել է 51.6% կամ **468 միլիարդ** ՀՀ դրամ: Ապահովագրության տեսանկյունից, եթե ի վերջո հանգենք ապահովագրության «եկոմուտների» վրա հիմնված մոդելի կիրառմանը, ապահովագրական գումարը կամ ապահովագրական արժեքը կկազմի հենց 468 մլրդ դրամի կամ **975 մլն ԱՄՆ դոլարի** չափով:

Համեմատելով գյուղատնտեսության միջազգային փորձը, և ուսումնասիրելով դրանց կիրառման առանձնահատկությունները, հատկանշական է, որ.

1. Գրեթե բոլոր այն երկրներում, որտեղ գործում է գյուղատնտեսության ապահովագրության համակարգ, պետությունը ունի մասնակցության բարձր մակարդակ՝ ինչպես ապահովագրավճարների և հատուցումների սուբսիդավորման, այնպես էլ գործընթացների կառավարման, կարգավորման, պրոդուկտների մշակման և ստանդարտացման առումով,
2. Երկրների մեծ մասում կիրառվում է գյուղատնտեսության ապահովագրության «մուլտիռիսկային» մոդելը, ոչ թե կոնկրետ նշված ռիսկերից ապահովագրությունը,

¹ ԳՀ ԿԿԿ Վիճակագիր 2018, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2018թ. ԳՈՐԿԱՎՈՐ-ԴԵՎՏՄԵՐԻՆԸ, հասանելի՝ https://www.armstat.am/file/article/sv_12_18a_122.pdf

3. Երկրների մեծ մասում կիրառվում է «բերքատվության վրա հիմնված» ապահովագրության մոդելը, որը ինքնին փաստում է այդ մոդելի արդյունավետության բարձր մակարդակը և կիրառելիությունը,

4. Ինդեքսային ցուցիչների հիման վրա իրականացվող գյուղատնտեսության ապահովագրությունը իրականացվում է հիմնականում ԱՄՆ և Կանադայում, և հանդիսանում է գյուղատնտեսության ապահովագրության առավել բարդ, սակայն արդյունավետ մեթոդներից մեկը,

5. Գրեթե բոլոր երկրներում իրենց ակտիվ դերակատարությունը ունեն գյուղացիական կոոպերատիվները, որոնք իրենց know-how-ի կիրառման միջոցով անմիջական ազդեցություն ունեն գյուղատնտեսական ռիսկերի կանխարգելման միջոցառումների իրականացման վրա,

Ատենախոսության **Երկրորդ՝** «ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսության ապահովագրության մոդելը և դրա ազդեցությունը ապահովագրական շուկայի վրա» **գլխում** գնահատվել է գյուղատնտեսության ապահովագրության ազդեցության չափերը ՀՀ ապահովագրական շուկայի վրա, ուսումնասիրվել է գյուղատնտեսության ապահովագրության «Արտադրական ծախսերի» հիման վրա իրականացվող մոդելը, գնահատվել դրա դրական և բացասական կողմերը, և առաջարկվել է «Բերքի ապահովագրության» հիման վրա մոդելը՝ որպես առավել կատարելագործված մոդել:

2017 թվականից սկսած KfW բանկի ֆինանսավորմամբ և պատվերում շվեյցարական MF Strategy Sarl ընկերությունը մշակել է ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման ծրագիր: Ապահովագրության լավագույն մեխանիզմ է ընտրվել «**արտադրական ծախսերի**» հիման վրա ապահովագրությունը: Այսինքն, հաշվի է առնվում 1 հա այգի մշակելու համար անհրաժեշտ ծախսերը, ներառյալ ոռոգման, աշխատուժի, մշակման, պարարտանյութի, և այլ ծախսեր, արդյունքում ստացված թիվը ավելանում է 20% կանխատեսվող շահույթով և սահմանվում են **ապահովագրական գումարները՝** յուրաքանչյուր մշակաբույսի համար 4 տարբերակով: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 5 տարով՝ տարեցտարի ավելացնելով ապահովագրության ենթակա մշակաբույսերի տեսակները և ապահովագրվող ռիսկերը: Այսպես, առաջին տարում նախատեսվում է ապահովագրել խաղողի և ծիրանի այգիները այն մարզերում, որտեղ աճում է խաղող և ծիրան: Ռիսկերն են կարկուտ և հրդեհ, գարնանային ցրտահարություն՝ 2 տեսակի տարբերակով. 100% և 50% ծածկույթներով:

Հարկ է նշել, որ **60%** սիմվոլիկ վնասաբերության դեպքում (ինչը շատ ավելի ցածր է, քան միջազգային փորձն է վկայում, օրինակ՝ Վրաստանում 2018-ին եղել է 90% վնասաբերություն) գյուղատնտեսական ապահովագրության այս ծրագիրը ՀՀ ապահովագրական շուկայի վրա ունենալու է բացասական ազդեցություն՝

(176,259,737) ՀՀ դրամի չափով: Ստորև Աղյուսակով ներկայացնենք հիմնավորումը.

Աղյուսակ – Գյուղատնտեսական ապահովագրության ազդեցության կանխատեսումը ապահովագրական շուկայի վրա, ՀՀ դրամ²

	2019	2020	2021	2022	2023	ԸՆԴԱՄԵԸ
Համախառն ապահովագրավճար	174,012,700	787,058,774	1,313,693,624	1,800,223,219	2,494,769,693	6,569,768,115
Վերաապահովագրական վճար* (90%)	156,611,430	708,352,897	1,182,324,262	1,620,200,897	2,245,292,724	5,912,782,209
Սեփական պահում (10%)	17,401,270	78,705,877	131,369,362	180,022,322	249,476,969	656,975,801
Վերաապահովագրական միջնորդավճար 26%	40,718,972	184,171,753	307,404,308	421,252,233	583,776,108	1,537,323,374
ԳԱԱԳ* բրոքերային միջնորդավճար 2.5%	3,915,286	17,708,822	29,558,107	40,505,022	56,132,318	147,819,555
ԳԱԱԳ անդամավճար 5%	-	78,705,877	131,369,362	180,022,322	249,476,969	639,574,531
ԳԱԱԳ ֆիքսված վճար	85,260,000	-	-	-	-	85,260,000
Ապահովագրավճարը նվազեցումներից հնար	- 31,055,044	166,462,931	277,846,201	380,747,211	527,643,790	1,321,645,089
Վնասաբերություն* 60%-ի դեպքում	104,407,620	472,235,264	788,216,174	1,080,133,931	1,496,861,816	3,941,860,869
Վերաապահովագրական հարուցումներ (90%)	93,966,858	425,011,738	709,394,557	972,120,538	1,347,175,634	3,547,674,782
Ապահովագրական հարուցումներ (10%)	10,440,762	47,223,526	78,821,617	108,013,393	149,686,182	394,186,087
Վնասի կարգավորման ծախս* 3%	3,132,228.60	14,167,057.93	23,646,485.23	32,404,017.94	44,905,854.47	118,255,644
Ծրագրի համախառն շահույթ կամ վնաս	- 44,628,035	105,072,346	175,378,099	240,329,800	333,051,754	809,203,358
Գործակալների միջնորդավճար 10%	17,401,270	78,705,877	131,369,362	180,022,322	249,476,969	656,975,801
Գործավարման ծախսեր 5%	8,700,635	39,352,939	65,684,681	90,011,161	124,738,485	328,487,901
Ծրագրի զուր շահույթ/վնաս	70,729,940	12,986,470	21,675,945	29,703,683	41,163,700	- 176,259,737

Աղյուսակում մատնանշված մի քանի կետերի պարզաբանումներն են.

- Աղյուսակի հիմնական ցուցանիշները վերցված են KFW Բանկի հետազոտություններից և կանխատեսումներից,
- Ծրագրի շրջանակներում ռիսկերի 90%-ը վերաապահովագրվելու է Swiss Re Շվեյցարական վերաապահովագրական ընկերությունում,

² Աղյուսակը՝ հեղինակային: Հիմնական ցուցանիշները՝ Microfinance Strategy Särl, Consulting Services for the Programme Agricultural Insurance Implementation in Armenia, BUSINESS GROWTH CALCULATIONS, January 2019, Lausanne, Switzerland

- Վնասի կարգավորման ծախսերի 3% չափը սահմանվել է՝ հիմնված գույքի ապահովագրության վնասների գնահատման փորձը:

Աղյուսակից երևում է, որ 5 տարիներից ոչ մեկի ընթացքում գյուղատնտեսական ապահովագրության ծրագիրը դրական ազդեցություն չի ունենալու ապահովագրական շուկայի վրա: Ծախսերի ամենամեծ կշիռը վերաապահովագրավճարներից հետո կազմում են գործակալական միջնորդավճարները և ԳԱԱԳ անդամավճարները, որոնք կազմում են ավելի շատ, քան կանխատեսվող հատուցումները:

Գյուղատնտեսական ապահովագրության այսպիսի համակցությունը գնահատվում է **ոչ արդյունավետ կամ ոչ նպատակահարմար**:

Վերաապահովագրության մասով ընդհանուր առմամբ կարող ենք եզրակացնել, որ դրական վնասաբերության մակարդակի դեպքում (մինչև 100%) վերաապահովագրության փոքր մասնաբաժինը ապահովում է շուկայի ավելի մեծ շահույթ, և հակառակը, բացասական վնասաբերության մակարդակի դեպքում (100%-ից ավել) վերաապահովագրության փոքր մասնաբաժինը շուկայի վրա ունենում է բացասական ազդեցություն:

Ստորև նշենք ծրագրի բացասական կողմերը.

1. Արտադրական ծախսերի վրա հիմնված մեխանիզմը ամբողջությամբ չի ծածկում բնական աղետների հետևանքով գյուղացու կրած փաստացի վնասները,
2. Վերոնշյալ կետում նշված իրադարձությունների հետևանքով ազգաբնակչության մոտ կարող է պակասել վստահությունը ապահովագրական ընկերությունների նկատմամբ,
3. Հաշվարկված սակագները, կանխատեսվող վնասաբերությունը, և այլ թվային ցուցիչներ հիմնված են միայն հարցազրույցների վրա, և իրական վիճակագրության բացակայության հետևանքով հնարավոր են մեծ շեղումներ,
4. Ապահովագրական ընկերությունները յուրաքանչյուր տարի կրում են վնաս: Հիմնք ընդունելով վերոնշյալ բացասական կողմերը՝ առաջարկվում է կիրառել հետևյալ մոտեցումները (ծախսերի կրճատման և արդյունավետության բարձրացման նպատակով).

1. Այս ծրագրի շրջանակներում վաճառվող ապահովագրական վկայագրերը՝ պոլիսները, վաճառելի ոչ թե գործակալների, այլ ընկերությունների հաստիքային աշխատակիցների միջոցով՝ 2-3% միջնորդավճարով, կամ հենց գործակալների միջոցով՝ 5% միջնորդավճարով: Արդյունքում միջնորդավճարների ծախսը կկրճատվի 328 մլն ՀՀ դրամով, իսկ ապահովագրական շուկան վնասի փոխարեն կստանա շահույթ՝ 152 մլն ՀՀ դրամի չափով:

2. Կրճատել նաև ԳԱԱԳ անդամավճարի չափը՝ 5-ի փոխարեն վճարելով 3%: ԱՊՊԱ ոլորտում Ավտոապահովագրողների Բյուրոյին վճարվող անդամավճարը կազմում է 1.5%, հետևաբար 5% անդամավճարը ԳԱԱԳ-ին հիմնավորված չէ: Այդպիսով ևս 131 մլն ՀՀ դրամ կավելանա շահույթին և այն կկազմի 283 մլն ՀՀ դրամ, իսկ Պետական Բյուջե կվճարվի 56 մլն ՀՀ դրամ շահութահարկ:

3. Երրորդ տարվանից սկսած վերանայել վերաապահովագրության մասնաբաժինը,

4. Ծրագրի շրջանակներում մեծ շեշտադրում դնել վիճակագրական տվյալների հավաքագրման, ճշգրտումների վրա,

Այժմ դիտարկենք խաղողի բերքատվության իրական չափի և հատուցման ենթակա գումարների համեմատականը: Այսպես, ՀՀ-ում 2018թ.-ին խաղողի 1 հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 120 ցենտներ³: 2018թ.-ի սեպտեմբեր նոյեմբեր ամիսներին խաղողի մթերման միջին գինը եղել է 140 դրամ/կգ⁴, հետևաբար 1 հեկտարի միջին եկամտաբերությունը կազմել է **1,680,000 ՀՀ դրամ**:

Քանի որ գյուղատնտեսության ապահովագրության ծրագրով խաղողի 1 հա համար առավելագույն ապահովագրական գումարը 1,5 մլն ՀՀ դրամ է⁵, տարբերությունը իրական եկամտաբերության հետ կկազմի 168,000 դրամ կամ 11%, որը գյուղատնտեսական ռիսկերից պաշտպանվածության առումով ընդունելի թիվ է: Եթե հաշվի առնենք նաև 10% չհատուցվող գումարը, ապա կարելի է եզրակացնել, որ, օրինակ, կարկուտի դեպքում 1 հա խաղողի այգու 100% վնասման դեպքում գյուղացին կստանա իրական կորցրած եկամտի 80%-ը, եթե ընտրած լինի ապահովագրական գումարի ամենաբարձր՝ 1,5 մլն ՀՀ դրամ տարբերակը:

Եթե վերոնշյալ վերլուծությունը կատարենք մարզային մակարդակով, կտեսնենք, որ արտադրական ծախսերի մեթոդը դրական ազդեցություն ունի ցածր բերքատվություն ունեցող մարզերի համար, և բացասական ազդեցություն՝ բարձր բերքատվություն ունեցող մարզերում: Արարատի և Արմավիրի մարզերում խաղողի միջին բերքատվությունը 1 հա համար կազմել է համապատասխանաբար 157 և 136.7 ցենտներ, իսկ միջին եկամտաբերությունը՝ 2,198,000 ՀՀ դրամ և 1,913,800 ՀՀ դրամ: Արդյունքում այս մարզերում ապահովագրական

³ Վիճակագրական տեղեկագիր - Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2019 թվականին

⁴ ԱԿԿ, Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, 2018թ.

⁵ KWF Բանկի հետազոտություն՝ Consulting Services for the Programme, 'Agricultural Insurance Implementation in Armenia', Յունվար 2019թ

պաշտպանվածությունը կլինի համապատասխանաբար 68% և 78%, իսկ 10% չհատուցվող գումարը հանելիս՝ 58 և 68%:

Կարկուտից 2 ամենախոցելի մարզերում ապահովագրական պաշտպանվածությունը իրական կորուստներից ցածր է, իսկ առավել քիչ խոցելի մարզերում՝ բարձր:

1. Արտադրական ծախսերի մոդելի դեպքում միջինացված տվյալներով ՀՀ-ում գյուղացիները ունենում են 80% պաշտպանվածություն՝ համեմատելով ապահովագրական գումարը և իրական եկամուտները:

2. Մարզից մարզ խաղողի բերքատվության և եկամտաբերության խիստ տատանումների հետևանքով առավել խոցելի մարզերը ունենում են ավելի ցածր ծածկույթ, քան ոչ ռիսկային մարզերը:

3. Փոքր բերքատվություն ունեցող մարզերում մեծ է խարդախությունների ռիսկը: Մասնավորապես՝ 450,000 ՀՀ դրամ եկամտաբերություն ունեցող գյուղացուն ձեռնտու է դառնում այրել այգին և ստանալ 1,500,000 ՀՀ դրամ հատուցում:

10 մլն ՀՀ դրամի չափով բերքի համար կնքել 1,5 մլն ՀՀ դրամ ապահովագրական գումարով պայմանագիր, մեղմ ասած, արդար չէ:

Վերոնշյալ խնդիրների լուծման կամ մեղման նպատակով, առաջարկում ենք.

1. Արտադրության ծախսերի մոդելի վրա հիմնված ապահովագրական գումարների մեխանիզմը փոխարինել «Բերքի կամ շրջանառության վրա հիմնված» մոդելով:

2. Սահմանել լողացող ապահովագրական գումարներ՝ ֆիքսված ապահովագրական գումարների համեմատ: Գործող ծրագրում առաջարկվում է ապահովագրական գումարների 4 տարբերակ՝ 750,000 դրամ, 1,000,000 դրամ, 1,250,000 դրամ և 1,500,000 դրամ:

Աշխարհում ամենադասական ապահովագրությունը մոլտիռիսկային հիմունքներով ապահովագրվող «**Բերքի Ապահովագրություն**» է, առավել հայտի **Yield Insurance** անվանմամբ: Ապահովագրությունը հիմնված է կոնկրետ ցանքատարածության կոնկրետ բերքատվության և շրջանառության հիման վրա: Այսինքն, ապահովագրվում է այն, ինչ իրականում կա ծառերի վրա, կամ կանխատեսվում է լինի:

Ապահովագրության այս մոդելը ունի հետևյալ **դրական կողմերը**.

1. Ավելի ընդգրկուն է լուծում գյուղացու սոցիալական խնդիրը, քան արտադրական ծախսերի հիման վրա իրականացված ապահովագրությունը,

2. Իր մեջ պարունակում է արդարության սկզբունքը՝ որքան բարձր է բերքատվությունը, այնքան շատ է ապահովագրավճարը, և հակառակը,

3. Հնարավորություն ունի սակագնի վրա կիրառել անդերրայթինգային կարգավորիչ գործակիցներ՝ հիմնված մշակվող այգիների

դասավորվածությանը, ոռոգման համակարգերի, ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի առկայության, և այլն,

4. Ապահովագրական ընկերությունները հավաքագրում են ավելի շատ ապահովագրավճարներ՝ ձևավորելով ավելի ամուր ֆոնդ գյուղատնտեսական խոշոր պատահարներին դիմակայելու համար:

Առաջարկում ենք կիրառել Բերքի ապահովագրության ապահովագրավճարի պարզ հաշվարկ՝ առանց շեղումների և այլ գործոնների հաշվի առնելու.

$$\text{Ապահովագրավճար} = \text{Մակերես} \times \text{Բերքատվություն} \times \text{Սակագին}$$

Սակագինը՝ ինքնուրույն հաշվարկման ենթակա մեծություն է և ըստ էության՝ հաշվարկված ապահովագրական սակագնից է բխում է ապահովագրավճարի մեծությունը⁶:

Ապահովագրական գումարը, տրամաբանորեն, կլինի⁷.

$$\text{Ապահովագրական գումար} = \text{Մակերես} \times \text{Բերքատվություն}$$

Անհրաժեշտություն կա հավաքագրել գյուղատնտեսության ապահովագրության համար անհրաժեշտ վիճակագրական տվյալներ, որի հիման վրա էլ նոր հնարավոր կլինի հաշվարկել սակագները հետևյալ տրամաբանությամբ, կամ քայլերով.

Քայլ 1 – Մարզային, կամ համայնքային մակարդակով հավաքագրվում է ըստ մշակաբույսի 1 հա-ից ստացվող բերքատվությունը: Այս ցուցանիշը ներկա պահին էլ առկա է, բայց հարկ ենք համարում նշել, որ ԱՎԿ տվյալները ամբողջությամբ չեն արտացոլում իրական պատկերը: Արդյունքում կստանանք, որ, օրինակ, Արմավիրի մարզում 1 հա խաղողի ցանքատարածությունից ստանում ենք 13.6 տոննա բերք: Այս թիվը այսօր սահմանված է պաշտոնական վիճակագրությամբ:

Քայլ 2 – Մարզային, կամ համայնքային մակարդակով իրականացնել մշակաբույսերի առկա ցանքատարածությունների իրական չափագրում: Ընդ որում, չափագրումների և բերքատվության իրական չափի որոշման եղանակները ներկայացված են սույն առենախոսության վերջին բաժնում: Արդյունքում կստանանք, որ, օրինակ, Արմավիրի մարզում կա **6,246 հա** պտղատու հասակի խաղողի տնկարկ: Այստեղից 2018 թվականին հավաքագրվել է 85,368 տոննա բերք: Եթե չբաժանենք խաղողը ըստ սորտերի, և հիմք ընդունենք 1 կգ խաղողի 140 դրամ արժեքը, ապա կարելի է եզրակացնել, որ 2018

⁶ Ճուղության Ա.Գ. Ապահովագրական գործ: Ուսումնական նեոնարկ, Երևան, 2007. 318 էջ:
⁷ MILLIMAN & ROBERTSON, INC., ACTUARIAL DOCUMENTATION OF MULTIPLE PERIL CROP INSURANCE RATEMAKING PROCEDURES, (262) 784-2250, August 1, 2000, page 2-5

թվականին Արմավիրի մարզի խաղողի համախառն արտադրանքը կազմել է 11,951 մլն ՀՀ դրամ, կամ մոտ 24,899,000 ԱՄՆ դոլար: Այս թիվը, այլ ձևակերպմամբ, մեր համախառն ապահովագրական գումարն է:

Քայլ 3 – Իրականացնել համապարփակ մոնիտորինգ՝ ըստ յուրաքանչյուր մշակաբույսին հասցված վնասի և ռիսկի: Արդյունքում կստանանք, որ, օրինակ, Արմավիրի մարզում տարեկան X անգամ տեղի է ունենում կարկուտ, յուրաքանչյուր կարկուտի դեպքում վնասվում է Y հետկար ցանքատարածություն, և այդ Y հեկտարի Z% բերքը ամբողջությամբ վնասվում է: Արմավիրի մարզում կարկուտի հետևանքով խաղողին հասցված վնասի տարեկան չափը կկազմի՝

$$\text{AVG.D} = X * Y * Z\% * \text{AVG.PRICE}$$

Որտեղ՝

- AVG.D = Տարեկան վնասի միջին չափ
- AVG.PRICE = Միջին շուկայական գին

Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկում ենք բերքի ապահովագրության մոդելը ՀՀ-ում ներդնել փուլային սկզբունքներով:

ՓՈՒԼ 1՝ ՓՈՐՁՆԱԿԱՆ - Ներկայիս պիլոտային ծրագիրը, ինչպես արդեն նշվել է նախորդ բաժիններում, հիմնված է արտադրական ծախսերի մոդելի վրա: Ծրագրի շրջանակներում հաշվարկվել են համապատասխան սակագներ, բաժանվել են ռիսկային գոտիներ, և կատարվել ահռելի աշխատանք՝ գյուղատնտեսական ապահովագրության համակարգի ներդրման համար:

ՓՈՒԼ 2՝ ՉՈՒԳԱՇԵՐ – Պիլոտային ծրագրի ավարտից հետո առաջարկում ենք Արտադրական ծախսերի մոդելը պահպանել՝ որպես 2-րդ տարբերակ: Այսինքն, Բերքի ապահովագրությունը դառնում է առաջնային, ԳԱԱԳ և ապահովագրական ընկերությունների ամբողջ մարքեթինգային և անդերրայթինգային քաղաքականությունը ուղղված է լինում Բերքի ապահովագրության մոդելի առաջխաղացման համար, և ի վերջո, ևս 3 տարի անց, այսինքն 2028 թվականի դրությամբ դնում ենք թիրախ՝ ապահովագրված ֆերմերների 70%-ի մոտ բերքի ապահովագրության մոդելի առկայություն:

ՓՈՒԼ 3՝ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ – Այս փուլում, որը այլևս ժամկետներ չունի, առաջարկվում է միմիայն «Բերքի ապահովագրության» մոդել, իսկ Արտադրական ծախսերի մոդելը հանվում է շրջանառությունից: Արդյունքում ՀՀ-ում ունենում ենք ամբողջական, մուլտիռիսկային, համապարփակ ապահովագրության մոդել, որը բավարարում է գյուղացու ֆինանսատնտեսական և սոցիալական կարիքները, տրամադրում է ամբողջական և իրական ծածկույթ, և չի առաջացնում հետագա դժգոհությունների հավանականություն:

Հաշվի առնելով ՀՀ-ում ԱՊՊԱ ոլորտի ներդրման հաջողությունը, առաջարկում ենք առաջին տարվանից սկսած և՛ պիլոտային ծրագիրը, և՛ հաջորդիվ փուլերը իրականացնել **ՊԱՐՏԱԴԻՐ** եղանակով՝ համապատասխան օրենքի առկայությամբ: Կամավոր եղանակը վաճառքի և մշակույթի ձևավորման ամբողջ բեռը թողնում է ապահովագրական ընկերության գործակալների և աշխատակիցների վրա: Ավելին, կամավոր եղանակով ընդգրկվածության մակարդակի անբավարարությունը մեծացնում է պրոդուկտի վնասաբերությունը, և ի վերջո ապահովագրական ընկերությունները կարող են ընդհանրապես հրաժարվել այս ապահովագրությունից:

Ատենախոսության **Երրորդ**՝ «ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար բաշխման (վաճառքների) եղանակները, դրանց հնարավորությունները եվ ընդգրկվածությունը» **գլխում** ներկայացվել են ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության պայմանագրերի բաշխման լավագույն եղանակները, կորեբապտիվների դերը և հնարավորությունները՝ գյուղատնտեսական ապահովագրության զարգացման համար, ջերմոցային տնտեսությունների ապահովագրության հիմնախնդիրները և լավագույն լուծումները, ինչպես նաև անօդաչու թռչող սարքերի կիրառելիությունը վնասների գնահատման մեջ:

Առաջարկվում է քայլեր ձեռնարկել ՀՀ-ում գյուղացիական կոոպերատիվների ցարգացման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա ներդնել ապահովագրական համակարգը ավելի քիչ ծախսերով և ավելի բարձր արդյունավետությամբ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ շուկայական հարաբերությունների պայմաններում, կոոպերացիան նպաստում է ինչպես բուսաբուծական ու անասնապահական մթերքների արտադրության, դրանց պահպանման, վերամշակման, իրացման, այնպես էլ ագրարային ոլորտի բազմաբնույթ սպասարկումների, մատակարարումների, նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունավետության բարձրացմանը:

Կոոպերատիվ համակարգում անդամների իրավունքների և շահերի պաշտպանության տեսանկյունից ամենակատարյալ կազմակերպարավական ձև են գյուղատնտեսական կոոպերատիվները⁸: Կոոպերատիվների հիմնական առավելություններն են⁹.

1. Գյուղատնտեսական կոոպերատիվների անդամների եկամուտը մեծ է, իսկ ծախսը՝ փոքր, քանի որ ծախսերը և ռիսկերը բաշխվում են մի քանի տուբյեկտների մեջ:

⁸ Տարիել Բարսեղյան, Գյուղատնտեսական Կոոպերատիվների Դերը Շուկայական Հարաբերություններում, Գիտական Հոդված, Արքիվը՝ http://www.ysu.am/files/01T_Barseghyan.pdf

⁹ Վրաստանի Գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման գործակալության հաշվետվություն, 2014

2. Համատեղ տնտեսական գործունեությամբ կայուն շուկան ավելի մատչելի է:

3. Անհատական (առանձին-առանձին)՝ գյուղացիների գործունեությունը հնարավոր է միայն ցածր տեխնոլոգիական հագեցվածությամբ, իսկ ուժերի միավորմամբ՝ հնարավոր է նոր տեխնոլոգիաներ ներդնել:

4. Գյուղատնտեսական կոոպերատիվը, որպես միավորում, համարվում է վարկունակ և վարկային ռեսուրսը նրա համար ավելի մատչելի է, քան մեկուսացված սուբյեկտի՝ գյուղացու համար:

Որոշ էքսպերտային գնահատումների համաձայն՝ 1 կոոպերատիվի անդամ տնտեսությունների օպտիմալ քանակը միջինում 10-20 տնտեսություն է¹⁰: Այսպես, եթե ՀՀ-ում գործող 340,000 գյուղատնտեսական կոոպերատիվների 70%-ը կազմեն 15 անդամներից բաղկացած կոոպերատիվներ, ՀՀ-ում կունենանք 15,866 կոոպերատիվ և 102,000 անհատական տնտեսություններ: Ապահովագրական ընկերությունները այստեղ գործ կունենան ոչ թե 340,000, այլ շուրջ 3 անգամ քիչ մարդկանց հետ, ինչը ապահովագրական պայմանագրերի բաշխման և սպասարկման գործավարման ծախսերը ուղղակիորեն կնվազեն 2-3 անգամ:

Մասշտաբային տեսակներով ապահովագրության ապահովագրավճարների մեջ բեռնվածությունը հիմնականում կազմում է 30-35%, որից 10-15%-ը՝ նախատեսված շահույթն է, ապահովագրավճարի 20-25%-ը հնարավոր է 3 անգամ պակասեցնել՝ միայն կոոպերատիվների ստեղծման միջոցով¹¹:

Կոոպերատիվների առկայությունը մեծ դեր կունենա նաև վնասների գնահատման ընթացակարգերի վրա: Ինչպես ապահովագրության մյուս տեսակներում, այնպես էլ գյուղատնտեսական ապահովագրությունում հայտերի կարգավորումը ուղեկցվում է անհրաժեշտ բազմաթիվ փաստաթղթերի հավաքագրումով, որը կարգավորման մեջ ամենաժամանակատարն է: Հաճախ գույքի ապահովագրության հայտերը կարգավորվում է 3 ամսից մինչև 1 տարի ժամկետներում: Հաշվի առնելով գյուղատնտեսական ապահովագրության բարդության աստիճանը, ինչպես նաև ՀՀ-ում փորձի բացակայությունը՝ այս պրոցեսները կարող են էականորեն երկարել: Հետևաբար, կոոպերատիվների միջոցով փաստաթղթաշրջանառությունը մի քանի անգամ ավելի արագ հնարավոր կլինի կազմակերպել, քան անհատական տնտեսությունների հետ առանձին-առանձին:

Հատկանշական է նաև կոոպերատիվների կազմակերպարավական ձևի ընտրության հարցը: Ոչինչ չի խանգարում ամենապարզ **Քաժնետիրական Ընկերության** մոդելը օգտագործել նաև կոոպերատիվներում: Ստորև

¹⁰ GOVERNMENT OF THE REPUBLIC OF THE UNION OF MYANMAR, Formulation and Operationalization of National Action Plan for Poverty Alleviation and Rural Development through Agriculture (NAPA), Working paper – 7, Yangon, June 2016, page 3

¹¹ Ա.Երուդյան, Ապահովագրական Գործ, Ուսումնական Ձեռնարկ, Երևան, 2007, ISBN 99941 – 44 – 11 – 1, Էջ 325

ներկայացնենք ՀՀ-ում նման կոոպերատիվների ստեղծման համար ահրաժեշտ քայլերը.

1. 2019 թվականի ապրիլի 1-ի դրությամբ Հայաստանում կա 1004 բնակավայր, որոնք տեղակայված են 502 համայնքներում, իսկ առանց Երևանի՝ 501 համայնքներում: Նպատակահարմար ենք գտնում կոոպերատիվներ ստեղծել յուրաքանչյուր համայնքում՝ ընդամենը 501 հատ:

2. Կոոպերատիվների մասնակիցներն են՝ ֆերմերները և համայնքապետարանները:

3. Կոոպերատիվները հիմնադրվում են Փակ Բաժնետիրական Ընկերության կարգավիճակով՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությամբ:

4. Յուրաքանչյուր ֆերմեր դառնում է ընկերության բաժնետեր՝ իր հողի մեծության և բերքատվության համամասնությամբ: Օրինակ, մասնակցում են 10 ֆերմեր, որոնցից յուրաքանչյուրը ունի 1 հա խաղողի այգի: Ըստ խաղողի սորտի, այգու մշակվածության աստիճանի և նախկինում տված բերքի չափի՝ կոոպերատիվի մասնագետ-գյուղատնտեսը հաշվարկում է յուրաքանչյուր ֆերմերի հողակտորի բերքատվության մակարդակը, իսկ թվային արտահայտությամբ հիմք է ընդունվում կոոպերատիվի ստեղծման պահի դրությամբ տվյալ մշակաբույսի միջին շուկայական արժեքը, կամ մթերման գինը: Այսպես, X ֆերմերի հողամասի բերքատվությունը եթե լինի 20 տոննա՝ 8 մլն ՀՀ դրամ կանխատեսվող եկամտով, իսկ 10 ֆերմերի գծով կանխատեսվում է 100 մլն ՀՀ դրամ եկամուտ, ապա X ֆերմերի բաժնեմասը կլինի $8 \text{ մլն} / 100 \text{ մլն} * 100 = 8\%$: Համայնքապետարանի մասնաբաժինը պայմանականորեն սահմանվում է **10%**՝ **համայնքային բյուջե մուտքեր ապահովելու և համայնքի ենթակառուցվածքների զարգացման նպատակով**:

5. Հիմնադրումից հետո կոոպերատիվը գործում և կառավարվում է սովորական Բաժնետիրական Ընկերության սկզբունքներով՝ համապատասխան ստորաբաժանումներով:

Ներկայումս ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսական ապահովագրության ծրագրի ներքո ապահովագրության են ենթակա մի քանի տեսակի մշակաբույսեր (խաղող, ծիրան, ցորեն, դեղձ, կարտոֆիլ, սալոր, և այլն)՝ կարկուտի, հրդեհի և ցրտահարության ռիսկերից: Ծրագրի բնույթից ելնելով՝ ՀՀ-ում ջերմոցային տնտեսություններում արտադրվող մշակաբույսերը մնում են առանց ծածկույթի, սակայն ջերմոցային մշակաբույսերը նույնպես ենթարկվում են ռիսկերի, և դրանց պաշտպանությունը նույնպես առաջնային դեր ունի ՀՀ գյուղատնտեսության համար:

Զերմատները գույքային վնասներ կրելու տեսանկյունից ենթարկվում են հետևյալ ռիսկերի.

1. **Բնական աղետներ¹²,**
2. **Հրդեհ, պայթյուն**
3. **Սարքավորումների խափանում**
4. **Երրորդ անձանց հակաօրինական կամ անփույթ գործողություններ**

Չնայած սրանք բուն գյուղատնտեսական ռիսկեր չեն, այնուամենայնիվ իրենց բնույթով չեն զիջում այնպիսի վտանգավոր երևույթների, ինչպիսիք են կարկուտը, երաշտը կամ ցրտահարությունը:

Ապահովագրության մեջ գոյություն ունի **Քիզնեսի Ընդհատում** հասկացությունը – այն ապահովագրվող ռիսկերի տեղի ունենալու հետևանքով քիզնեսի ընդհատման պատճառով կորցված եկամտի ապահովագրությունն է¹³:

Քիզնեսի ընդհատման գծով Ապահովադրին հատուցման ենթակա է իր կրած իրական կորուստը, որը ձևավորվում է ներքոնշյալ կետերում նշված տարրերից.

1. **«Ձուտ շահույթ»**
2. **«Հաստատուն Ծախսեր»**

ՀՀ-ում տարեկան համախառն ապահովագրական գումարը ջերմոցի գույքի և քիզնեսի ընդհատման համար կկազմի ավելի, քան **1 մլն ԱՄՆ դոլար**: ՀՀ-ում գույքի ապահովագրության գների մասին տեղեկատվությունը բացակայում է, սակայն միջին շուկայական սակագները ջերմոցների դեպքում, ներառյալ քիզնեսի ընդհատման ապահովագրությունը, կազմում է 0.3-0.4%: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ 1 հա բարձր տեխնոլոգիաներով կառուցված ապակեպատ ջերմոցի տարեկան ապահովագրավճարը կկազմի միջինում 3,510 ԱՄՆ դոլար կամ 1,7 մլն ՀՀ դրամ:

ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաներով կառուցված բոլոր ջերմոցների համար համախառն ապահովագրավճարը 112 հա համար կկազմի **190 մլն ՀՀ դրամ**:

Հաշվի առնելով, որ հասարակ ջերմոցների արժեքը մոտ 2 անգամ ցածր է՝ բարձր տեխնոլոգիաներով կառուցված ջերմոցների արժեքից, սովորական ջերմոցների 1 հա ապահովագրական գումարը կամ արժեքը կկազմի 408,000 ԱՄՆ դոլար: ՀՀ-ում ապահովագրական ընդհանուր գումարը կկազմի 452 մլն ԱՄՆ դոլար, իսկ բարձր տեխնոլոգիաները ներառյալ՝ 543 մլն ԱՄՆ դոլար՝ **926 մլն ՀՀ դրամ** պտտենցիալ ապահովագրավճարով, ինչը ՀՀ ապահովագրական շուկայի՝ 41 մլրդ ՀՀ դրամի¹⁴ 2.25%-ն է: Գույքի ապահովագրության պորտֆելը ՀՀ-ում կազմում է 3,5 մլրդ ՀՀ դրամ, հետևաբար ջերմոցային տնտեսությունների հետ միասին այն կարող է կազմել 4,4 մլրդ ՀՀ դրամ, որի **20.8%-ը**՝ ջերմոցներից հավաքագրված ապահովագրավճարն է:

¹² Greenhouse, Nursery and Crop Insurance, Australia, Allianz Policy Wording, A17AGRWP - V1.0, page 12

¹³ Special Coverages Policy booklet, CGI Canada, 2270 OC-26 01/2018 Saskatchewan

¹⁴ Arminfo, Раннинг страховых компаний Армении, СЕГМЕНТАЦИЯ ПРЕМИЙ СТРАХОВЫХ КОМПАНИЙ АРМЕНИИ НА 31.12.2018, № "56" 06.02.2019, стр. 18

Առաջարկում ենք մշակել և ներդնել ՀՀ-ում ջերմոցային տնտեսությունների համապարփակ ապահովագրության պրոդուկտ հետևյալ պայմաններով.

- **Ապահովագրության օբյեկտը՝** Ջերմատների կրող կառույցները, ոռոգման համակարգերը, սարքավորումները, ջրամբարները, և այլն անշարժ և շարժական գույքը, ինչպես նաև աճեցվող մշակաբույսերը:
- **Ապահովագրության արժեքը՝** շուկայական արժեքի չափով:
- **Ռիսկերը՝** Բնական աղետներ, հրդեհ, պայթյուն, երրորդ անձանց հակաօրինական գործողություններ, մեքենա-սարքավորումների խափանում, ինչպես նաև վերջիններիս հետևանքով բիզնեսի ընդհատման ապահովագրություն:
- **Տարեկան սակագին՝** 0.35%

Ջերմոցային տնտեսությունների ապահովագրություն կարող է ունենալ պոտենցիալ ազդեցություն.

- Ապահովագրական շուկայի վրա՝ պորտֆելի աճ 2.25%-ով:
- Գույքի ապահովագրության պորտֆելի վրա՝ 20.8% աճ:
- Ջերմոցային տնտեսությունների վրա՝ անկանխատեսելի ռիսկերից պաշտպանվածություն:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ դրոններից ստացված տվյալները վնասների գնահատման տեսանկյունից անգերազանցելի են: Այն ամենը, ինչը գյուղատնտես փորձագետը ստանում է անգնե աչքով՝ այցելելով վնասված այգի, դրոնի միջոցով հնարավոր է ստանալ ավելի կարճ ժամանակում, ավտոմատացված և ավելի բարձր ճշգրտությամբ:

Գործող ուղեցույցներով առաջարկվող կարգը չափից շատ ժամանակատար և ծախսատար է: 1 փորձագետը 1 հա վնասված դաշտի վնասի գնահատման համար ծախսում է մոտ 3-4 ժամ: Իսկ մասշտաբային կարկուտի, ցրտահարության կամ երաշտի դեպքում 5,000 – 10,000 հատ վնասված ֆերմերային տնտեսություններ գնահատելու համար անհրաժեշտ կլինի ներգրավել հարյուրավոր փորձագետների: Յուրաքանչյուր փորձագետի 1 ֆերմայի համար միջինում 15,000 դրամ վճարելու պարագայում կստանանք մոտ 75 – 150 մլն ՀՀ դրամ գործավարման ծախս, ինչը գյուղատնտեսական ապահովագրական շուկան կարող է տանել սնանկացման¹⁵:

Դրոնների օգնությամբ գործընթացի ավտոմատացման շնորհիվ օգտագործված ժամանակը հնարավոր է կրճատել մինչև 25 անգամ, իսկ ծախսերը վերոնշյալ պատահարի դեպքում կկազմեն 3-6 մլն ՀՀ դրամ, ավելացված 5-10 դրոնի արժեք՝ 12 մլն ՀՀ դրամ, որը վճարվում է մեկ անգամ, և

¹⁵ ՎԼԱՍԻ ՊԵՏՐՍՅԱՆԸ ՈՐԴԵՑՈՒՅՑ, Եիրանի մշակութային ծախսերի ապահովագրություն. «կարկուտ», «հրդեհ» «գարնանային ցրտահարումներ» ապահովագրական պարանջներ, Consulting Services for the Programme 'Agricultural Insurance Implementation in Armenia' ԵՐԱԳԻՐ, Երևան, Դեկտեմբեր 2018, 65 էջ

օգտագործվում 3-5 տարիների համար: 1 Անօդաչու սարքը 80 հա ցանքատարածությունը դիտարկում է 20 րոպեում¹⁶, ինչը ինքնին հիմնավորում է ժամանակի և ծախսերի կրճատման ներկայացված մոտեցումը: Այստեղ կարևոր հանգամանք է Դրոնները կառավարող մասնագետներին վճարումը: Առաջարկում ենք հատուցման մեջ կիրառվող Դրոնների ձեռքբերման ծախսերն իրականացնել ապահովագրական ընկերությունների հաշվին: Քանի որ վնասի գնահատումն իրականացնելու են անկախ փորձագետները, փորձագետների ուսուցումը ևս կարելի է իրականացնել ընկերությունների միջոցով, իսկ Դրոնների հետագա օգտագործումն արդեն փորձագետները կիրականացնեն անվճար:

Դրոնները կարելի է օգտագործել 2 ձևով՝ ՀՀ-ում հողերի չափագրման/քարտեզագրման գործընթացքում, և ապահովագրության պայմանագրերի կնքման/հատուցումների հաշվարկման գործընթացքում: Կրկնակի գործողություններից և հավելյալ ծախսերից խուսափելու նպատակով առաջարկում ենք այս 2 գործընթացները միավորել մեկ միասնական գործընթացում: Մասնավորապես, քանի որ ՀՀ-ում արդեն իրականացվում են չափագրումներ Հայաստանի Հանրապետության Կադաստրի Պետական Կոմիտեի կողմից, ինչպես նաև վերջինս իրականացնում է նաև հողային հաշվեկշիռների կազմումը ըստ համայնքների՝ առաջարկում ենք քարտեզագրումը/չափագրումը իրականացնել հենց Կադաստրի Պետական Կոմիտեի միջոցով՝ ԳԱԱԳ միջոցների հաշվին: Այս գործընթացը հնարավորություն կտա.

1. Ունենալ մեկ միասնական էլեկտրոնային քարտեզ՝ ՀՀ բոլոր հողերի և սեփականատերերի մասով,
2. Բացառել ստվերային հողամասերը,
3. Բացառել անօրինական գրանցումները, առանց սեփականության վկայականների և պայմանագրերի շահագործվող հողերը:

Ապահովագրական ընկերությունները հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով նույնականացնել ապահովագրվող հողակտորների կտորդինատները, կանխատեսվող բերքատվությունը, վնասների պատմությունը և այլն: Սա գործնականում կբացառի կրկնակի ապահովագրությունը, զեղծարարությունների հավանականությունը, ինչպես նաև էականորեն կնվազեցնի ապահովագրության և հատուցման գործընթացների և՛ տևողությունը, և՛ գործավարման ծախսերը:

«Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիները ՀՀ-ում: Ելնելով

¹⁶ Article, AGRICULTURE, 02.22.2019, How crop insurers are using drones to improve the claims cycle - <https://www.precisionhawk.com/blog/how-crop-insurers-are-using-drones-to-improve-the-claims-cycle>

հետազոտության արդյունքներից՝ կատարվել են որոշակի եզրակացություններ, որոնցից հիմնականները հետևյալներն են՝

1. Ներդնել **«Բերքի ապահովագրության» մոդելը**՝ փուլային եղանակով՝ ի լրումն «Արտադրական ծախսերի» մոդելի: Սկզբնական փուլում վաճառքն իրականացնել Արտադրական ծախսերի մոդելին զուգահեռ՝ համապատասխան սուբսիդավորմամբ: Ի վերջո ՀՀ ամբողջ գյուղատնտեսական ապահովագրությունը իրականացնել «բերքի ապահովագրության» սկզբունքով: Առաջարկվում է և՛ արտադրական ծախսերի մոդելը, և՛ բերքի ապահովագրության մոդելը ներդնել պարտադիր եղանակով՝ համապատասխան օրենքի մշակմամբ, ոչ թե կամավոր:

2. Պիլոտային ծրագրի շրջանակներում վաճառվող ապահովագրական վկայագրերը՝ պոլիսները, վաճառել ոչ թե գործակալների, այլ ընկերությունների հաստիքային աշխատակիցների միջոցով՝ 2-3% միջնորդավճարով, կամ հենց գործակալների միջոցով՝ 5% միջնորդավճարով: Արդյունքում միջնորդավճարների ծախսը կկրճատվի 328 մլն ՀՀ դրամով, իսկ ապահովագրական շուկան վնասի փոխարեն կստանա շահույթ՝ 152 մլն ՀՀ դրամի չափով:

3. Կրճատել նաև **ԳԱԱԳ անդամավճարի չափը**՝ 5%-ի փոխարեն վճարելով 3%: ԱՊՊԱ ոլորտում Ավտոապահովագրողների Բյուրոյին վճարվող անդամավճարը կազմում է 1.5%, հետևաբար 5% անդամավճարը ԳԱԱԳ-ին հիմնավորված չէ: Այդպես լս 131 մլն ՀՀ դրամ կավելանա շահույթին և այն կկազմի 283 մլն ՀՀ դրամ, իսկ Պետական Բյուջե կվճարվի 56,7 մլն ՀՀ դրամ շահութահարկ:

4. Ծրագրի շրջանակներում շեշտադրումը կատարել վիճակագրական տվյալների հավաքագրման, ճշգրտումների վրա, որպեսզի ծրագրի ավարտից հետո հնարավոր լինի մշակել և ներդնել ավելի համապարփակ, մատչելի և փոխադարձ արդյունավետ պրոդուկտ՝ հիմնված Բերքի ապահովագրության մոդելի վրա: 5 տարվա պիլոտային ծրագրի շրջանակներում պետական սուբսիդավորման չափը կազմելու է 3,2 մլրդ ՀՀ դրամ, այնինչ KFW + պետություն համախառն սուբսիդավորման գումարը 10 մլն ԱՄՆ դոլար է, կամ մոտ 4,8 մլրդ ՀՀ դրամ: Արդյունքում, մոտ 1.6 մլրդ դրամ ազատ դրամական միջոցներ են գոյանում, որը առաջարկում ենք ուղղել պատշաճ վիճակագրության հավաքագրման վրա:

5. Ներդնել **Ջերմոցային տնտեսությունների ապահովագրության մեխանիզմ**՝ «Բիզնեսի Ընդհատման» ապահովագրության և գույքի ապահովագրության ծածկույթներով: Ջերմոցային տնտեսությունների՝ նշված մոդելով ապահովագրության պոտենցիալ պորտֆելը կկազմի **926 մլն ՀՀ դրամ**:

6. Ստեղծել գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման հնարավորություններ՝ փուլային եղանակով: «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն» ծրագրի շրջանակներում կարելի է ստեղծել *հափուկ* տեսակի կոոպերատիվներ՝ «**Ապահովագրական կոոպերատիվներ**», որոնք կստեղծվեն ՓԲԸ կազմակերպահրավական եղանակով՝ թիրախային՝ գյուղատնտեսական ապահովագրության շրջանակներում, և հետագայում կկարողանան վերածնափոխվել՝ դառնալով արտադրական կամ սպառողական կոոպերատիվներ: Դրանք իրենց բնույթով, կառավարման ձևով, նպատակներով և կանոնադրությամբ նույնն են, ինչ գյուղատնտեսական կոոպերատիվները, սակայն գրանցվում են հենց ԳԱԱԳ-ում՝ հեշտացված և առանց վճարների տարբերակով, և օգտվում են միայն ապահովագրական ծառայություններից:

7. Օգտագործել բաշխման առավել արդյունավետ եղանակներ՝ գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության պայմանագրերի կնքման նպատակով: Մասնավորապես, օգտագործել **Համայնքապետարանների, Հայփոստ ՓԲԸ** ներուժը, ինչպես նաև կոոպերատիվների միջոցով բաշխման ցանցերը:

8. Կիրառել **Անօդաչու Թռչող Սարքերը**՝ գյուղատնտեսական ապահովագրության մեջ՝ ինչպես պայմանագրերի կնքման, այնպես էլ հայտերի կարգավորման և վնասների գնահատման նպատակով: Մասնավորապես, քարտեզագրումը, չափագրումը, այլ վիճակագրական տվյալների հավաքագրումը 100-200 անգամ ավելի արագ է իրականացվում դրոնի օգնությամբ, քան մարդու անզեն աչքով կամ այլ հին տեխնոլոգիաների կիրառմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության հնարավոր բաշխման եղանակները // **Տարածաշրջան և Աշխարհ**, Սեվծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների հանրային ինստիտուտ, 2019, № 5, էջ 75-78,
2. ՀՀ-ին բնորոշ գյուղատնտեսական ռիսկերը. ապահովագրությունը որպես այդ ռիսկերի զսպման մեխանիզմ // **ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ 1(2)**, 2019, ՀՏԴ 368.5(479.25), էջ 194-198,
3. ՀՀ-ում ներդրվող գյուղատնտեսական ապահովագրության մոդելը և հնարավոր ազդեցությունն ապահովագրական շուկայի վրա // **ԼՐԱԲԵՐ Հայ-Ռուսական համալսարանի սերիա՝ հումանիտար եվ հասարակական գիտություններ**, (31) ՀՌՀ Հրատարակչություն № 1/2019, էջ 53-60,
4. Գյուղատնտեսական ապահովագրության արտադրական ծախսերի մոդելի հիմնախնդիրները և արդյունավետությունը Հայաստանում // **ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ**, Հայաստանի ազգային ագրարային համալսարան N (67) 3/2019, էջ 46-49
5. Ջերմոցային տնտեսություններում գյուղատնտեսական ռիսկերի նվազեցման համար ապահովագրության հնարավոր տեսակները // **Այլընտրանք Գիտական հանդես**, 15 տարի առաջնագծում, 2019 # 2, Ապրիլ-Հունիս, ISSN 1829-2828, էջ 111-116,
6. Գյուղատնտեսական կոոպերատիվների դերն ու նշանակությունը ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման համար // **Տարածաշրջան և Աշխարհ**, Սեվծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների հանրային ինստիտուտ, 2019, № 5, էջ 71-74

ЛЕВОН КОЧАРЯН

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ СИСТЕМЫ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО
СТРАХОВАНИЯ В РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата
экономических наук по специальности 08.00.03 – “Финансы, бухгалтерский
учет”

Защита диссертации состоится 20-го февраля 2020г. в 14:00 часов, на заседании
специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в
Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г.
Ереван, ул. М. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Основная цель диссертации - выявить проблемы действующей системы
сельскохозяйственного страхования в Армении и найти соответствующие
объективные пути ее совершенствования.

Для этого были поставлены следующие задачи:

- изучить действующий механизм сельскохозяйственного страхования в
Армении,
- Узнать основные проблемы и недостатки этой системы,
- изучить основные причины отсутствия сельскохозяйственного страхования в
Армении до 2019 года,
- Изучить влияние пилотной программы сельскохозяйственного страхования на
страховой рынок, фермеров и в целом на экономику Армении,
- экономически обосновать необходимость внедрения сельскохозяйственного
страхования на иной основе, нежели действующая модель,

- Изучить лучшие каналы распространения агрострахования по всей стране.

Объект и предмет исследования. Объектом данного исследования является среда сельскохозяйственного страхования в Армении, отношения между страховыми компаниями, фермерами, посредниками, Центральным банком Армении и правительством. Предметом исследования является методология системы сельскохозяйственного страхования Армении.

В результате исследования некоторые из выводов имеют теоретическое и практическое применение, и в качестве новизны могут быть рассмотрены следующие:

1. Оценивая влияние и вопросы существующей модели сельскохозяйственных издержек на производственные затраты, было предложено внедрить новую модель сельскохозяйственного страхования под названием «Страхование урожая».
2. Внедрить механизм страхования бизнес-прерываний для теплиц в дополнение к страхованию имущества.
3. Учредить новый тип сельскохозяйственных кооперативов, аналогичный закрытым акционерным обществам.
4. В целях совершенствования существующей системы сельскохозяйственного страхования и повышения ее производительности было предложено оптимизировать некоторые операционные расходы, а также пересмотреть коэффициент перестрахования в сделке с рисками.
5. Было предложено использовать возможности технологических дронов в качестве метода распределения и оценки потерь.

LEVON KOCHARYAN

THE IMPROVEMENT WAYS OF AGRICULTURAL INSURANCE SYSTEM IN RA

The abstract of the thesis for the scientific degree of Doctor of Economics in the specialty 08.00.03- "Finance, accounting ".

The defense of the thesis will take place on 20 February 2020 at 14.00 o'clock at 014 Council of Economics of the SCC RA at Armenian State University of Economics, 128 Nalbandyan Street, Yerevan 0025.

ABSTRACT

The main goal of the dissertation is to identify the issues of current agricultural insurance system in Armenia and find out appropriate objective ways for its improvement.

For this purpose were set the following tasks:

- To study the current mechanism of agricultural insurance in Armenia,
- Find out the main issues and loopoles of this system,
- To study the main reasons of absence of agricultural insurance in Armenia until 2019,
- To study the impact of agricultural insurance pilot program on the insurance market, farmens, and overall on th economy of Armenia,
- Economically justify the necessity of implementation the agricultural insurance with a different basis, rather than the current model,
- Study the best distribution channels of agricultural insurance throughtout the country.

The object and the subject of the research. The object of this study is the agricultural insurance environment of Armenia, the relationship between insurance companies, farmers, intermedieries, Central Bank of Armenia and the Government. The subject of the research is the methodology of the agricultural insurance system of Armenia. As a result of the research some of the findings are of theoretical and practical application, and as a **novelty** could be considered the followings:

1. Assessing the impact and the issues of the current Production Costs model of agricultural insurance, it was suggested to implement a new model of agricultural insurance called "Yield Insurance".
2. To implement Business Interruption insurance mechanism for greenhouses in addition to the property insurance coverage.
3. To found new type of agricultural cooperatives, similar to Closed Joint Stock Companies.
4. In order to improve the current system of agricultural insurance, and increase its productivity, it was suggested to optimis some operational costs, as well as review the ratio of reinsurance in the ris transaction.
5. It was suggested to use possibilities of technological drones as the distribution and loss evaluation method.